

*«Առավոտ» օրաթերթի ս/թ սեպտեմբերի 6-ի համարի՝ «Ժառանգությունը» կոռեկցիայի կենթարկի Ձոյալին» հրապարակման կապակցությամբ.*

#### Հարգելի խմբագրություն

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին արձանագրություն չի կազմում և մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին որոշում չի կայացնում: ՀՀ ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին կետի 22-րդ ենթակետի համաձայն կենտրոնական ընտրական հանձնաժողովը գրանցում է ընտրված պատգամավորներին և նրանց տալիս պատգամավորի վկայական:

Թերթի ընթերցողների և ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի համար պարզաբանեմ, որ ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորների ընտրությունները կազմակերպում, ընտրությունների արդյունքներն ամփոփում և պատգամավորներ ընտրվելու մասին որոշումներ կայացնում են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները:

Ընտրական հանձնաժողովների անդամները հատուկ կարծիք կարող են ներկայացնել միայն համապատասխան ընտրական հանձնաժողովի կողմից կազմված քվեարկության (ընտրության) արդյունքների մասին արձանագրության վերաբերյալ (տե՛ս ՀՀ ԸՕ հոդ. 61 կետ 3, հոդ. 63<sup>1</sup> կետ 5, հոդ. 63<sup>2</sup> կետ 6): Մեծամասնական ընտրակարգով ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր գրանցելու դեպքում ՀՀ ընտրական օրենսգիրքը հատուկ կարծիք ներկայացնելու հնարավորություն չի ընձեռում:

Իմիջիայլոց, ս/թ օգոստոսի 26-ին թիվ 15 ընտրատարածքում կայացած Ազգային ժողովի պատգամավորի մեծամասնական ընտրակարգով լրացուցիչ ընտրության արդյունքների մասին արձանագրությունը ստորագրել է նաև ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում «Ժառանգություն» կուսակցությունը ներկայացնող անդամը, ով նույնպես կողմ է քվեարկել պատգամավոր ընտրվելու մասին հանձնաժողովի որոշմանը:

Ինչ վերաբերում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամին «կոռեկցիայի բերելուն», ապա ժողովրդավարական չափանիշների միջազգային փորձը և ՀՀ ընտրական օրենսգիրքը նախատեսում են ընտրական հանձնաժողովների անդամների գործունեության անկախություն և նրանց կողմից միայն ընտրական օրենսդրության պահանջների կատարում: Այս սկզբունքին հետևելու և գործունեության անկախությունն ապահովելու համար է, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ կետը սպառնիչ սահմանում է ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերը՝ զրկելով հանձնաժողովի անդամ նշանակողին հանձնաժողովի անդամին հետ կանչելու իրավունքից:

Հարգանքով

ՀՀ ԿԸՀ նախագահ Գ. Ազարյան